# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր  N 1
## N ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-Ա-21/2026-1
## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** **<<      >>       . 2026թ.**

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Խ. Իգիթյանի, որը գործում է ՀՀ ՆԳՆ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Ասպար Արմս ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Սամվել Մարգարյանի (այսուհետ՝ Վաճառող), հիմք ընդունելով 17.03.2026թ.-ին կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-Ա-21/2026-1 գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 և 7.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը**

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-Ա-21/2026-1 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (1) մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ներքին գործերի նախարարություն | «ԱՍՊԱՐ ԱՐՄՍ» ՍՊԸ |
| ք. Երևան, Նալբանդյան 130 | ք. Երևան, Արաբկիր, |
| ՀՀ Ֆինանսների նախարարության | Մամիկոնյանց փողոց 60/1 |
| գործառնական վարչություն | «Արդշինբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011042471 | ՀՀ 24744 00086360010 |
| ՀՎՀՀ 02882913 | ՀՎՀՀ 00093802 |
| հեռ. 010 59-68-57 | հեռ. 010 29-88-89 |
| էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am | էլ. հասցեն՝ info@arms.am |
| _______________ Խ. Իգիթյան | _______________ տնօրեն Ս. Մարգարյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Ստորագրող
ԽԱՉԱՏՈՒՐ ԻԳԻԹՅԱՆ
2014930309
2026-05-06 11:48:49 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Digitally signed by GLIJYAN ARMAN
2011740258
Date: 2026.04.30 07:41:10 VET